https://doi.org/10.46991/hc.2023.19.1.298

The Museum and the 44-day Artsakh War[1]

Haykuhi Muradyan
https://orcid.org/0009-0003-5399-5080
Doctor of Historical Sciences,
Yerevan State University
haykuhi.muradyan@ysu.am

Nzhdeh Yeranyan
https://orcid.org/0000-0003-2702-1429
Doctor of Historical Sciences,
Deputy Scientific Director of the History Museum of Armenia
nzhdeh.yeranyan@ysu.am

Keywords: Museum, war, private collection, heritage in crisis, occupied territory, "saved" and "lost" museums.

The article presents the issues of preservation of Artsakh's cultural heritage, in particular the issues of museum activities, their preservation and protection during and after the Artsakh 44-day war. Especially those museums and collections that came under Azerbaijani control as a result of the 44-day war were examined.

As a result of the war, one of the most damaged areas in the cultural life of Artsakh is the museum. As a result of the war, 17 state and private museums and collections remained in the territories occupied by the armed forces of Azerbaijan. The museums which collection was able to be evacuated from the occupied territories faced serious problems. These problems are especially related to the preservation and publicization of cultural values: where should these museum collections be kept, according to what principle and context should they be presented to international community, how should they be presented to the public, the problem of being cut off from one's own community also becomes relevant.

The research is based on in-depth interviews with museum directors, employees, museums, the Ministry of Education and Culture of Artsakh, as well as on the study of videos shared by different Azerbaijani users on various Internet platforms (Tik Tok, Twitter, Facebook, YouTube, Telegram).

The research was carried out within the framework of the "Monument Watch" project.

[1] Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6A010 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 298-308.
Received: 25.01.2023
Revised: 23.02.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Թանգարանը և Արցախյան 44-օրյա պատերազմը

Հայկուհի Մուրադյան
պատմական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան

Նժդեհ Երանյան
պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն

Հիմնաբառեր՝ Թանգարան, պատերազմ, մասնավոր հավաքածու, ժառանգությունը ճգնաժամում, օկուպացված տարածք, «փրկված» և «կորսված» թանգարան:

Հոդվածը ներկայացնում է Արցախի մշակութային ժառանգության պահպանության խնդիրները, մասնավորապես թանգարանների գործունեության, դրանց պահպանության և պաշտպանության հարցերն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո: Առանձնահատուկ քննության են ենթարկվել հատկապես այն թանգարաններն և հավաքածուները, որոնք Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում անցել են ադրբեջանական վերահսկողության տակ:

Պատերազմի արդյունքում Արցախի մշակութային կյանքում ամենամեծ վնաս կրած ոլորտներից մեկը թանգարանայինն է: 17 մասնավոր ու պետական թանգարաններ և հավաքածուներ պատերազմի արդյունքում մնացին Ադրբեջանի զինված ուժերի կողմից օկուպացված տարածքներում: Այն թանգարանները, որոնց հավաքածուն հնարավոր եղավ տարհանել օկուպացված տարածքներից, կանգնեցին լուրջ խնդիրների առջև: Այդ խնդիրները հատկապես վերաբերվում են մշակութային արժեքների պահպանությանը և հանրայնացմանը. որտե՞ղ պետք է պահվեն այդ արժեքները, ի՞նչ սկզբունքով և համատեքստում պետք է ցուցադրվեն, ինչպե՞ս պետք է ներկայացվեն հանրույթին, սեփական համայնքից կտրված լինելու խնդիրը նույնպես արդիական հարց է դառնում:

Հետևաբար հոդվածում քննարկվում է,

ա. ինչ գործողություններ են իրականացվել Արցախում 44 օրյա պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության դեմ,

բ. միջազգային օրենսդրական ինչ մեխանիզմներ կան, պաշտպանելու այդ ժառանգությունը պատերազմի ընթացքում և դրանից հետո,

գ. Ինչպիսին է այն թանգարանների ճակատագիրը, որոնք պատերազմական վտանգից ելնելով տարհանվել են և այն կրող համայնքի հետ միասին դարձել «փախստական»:

Հետազոտությունը հիմնված է թանգարանների տնօրենների, աշխատակիցների, Արցախի ԿԳՄՍ նախարարության համապատասխան բաժինների աշխատակիցների հետ ունեցած հարցազրույցների վրա, ինչպես նաև ադրբեջանական տարբեր օգտատերերի կողմից համացանցի տարբեր հարթակներում (տիկ տոկ, թվիթեր, ֆեյսբուք, յութուբ, թելեգրամ) տարածված տեսանյութերի ուսումնասիրության վրա:

Հետազոտությունը կատարվել է «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» (Artsakh Monument Watch) ծրագրի շրջանակներում:

Музей и 44-дневная Арцахская война

Айкуи Мурадян,
Кандидат исторических наук
Ереванский государственный университет

Нжде Еранян
Кандидат исторических наук
Замдиректор по науке Музея Истории Армении

Ключевые слова: музей, война, частная коллекция, наследие в кризисе, оккупированная территория, «спасенные» и «потерянные» музеи.

В статье представлены вопросы сохранения культурного наследия Арцаха, в частности вопросы музейной деятельности, их сохранения и защиты во время и после Арцахской 44-дневной войны. Особенно были осмотрены те музеи и коллекции, которые в результате 44-дневной войны перешли под контроль Азербайджана.

В результате войны одним из наиболее пострадавших направлений культурной жизни Арцаха является музей. В результате войны на оккупированных вооруженными силами Азербайджана территориях осталось 17 государственных и частных музеев и коллекций. Музеи, коллекции которых удалось эвакуировать с оккупированных территорий, столкнулись с серьезными проблемами. Эти проблемы особенно связаны с сохранением и популяризацией культурных ценностей: где должны храниться эти музейные коллекции, по какому принципу и в каком контексте они должны быть представлены международному сообществу, как они должны быть представлены публике, проблема сокращения выход из собственного сообщества также становится актуальными вопросами.

Исследование основано на интервью с директорами музеев, сотрудниками музеев, Министерства образования и культуры Арцаха, а также на изучении видеороликов, размещенных различными азербайджанскими пользователями на различных интернет-платформах (Tik Tok, Twitter, Facebook, YouTube, telegram).

Исследование проводилось в рамках проекта «Мониторинг Культурного наследия Арцаха».

* * *

Ներածություն: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծված պատերազմն ակնհայտորեն ուղղված էր ոչ միայն քաղաքացիական բնակչության վերացման, այլև այդ տարածքի մշակութային շարժական և անշարժ ժառանգության, մշակութային և կրթական հաստատությունների դեմ: Մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացումը

պատերազմական գործողությունների ժամանակ և հետո միջազգային մի շարք կոնվենցիաներով և հռչակագրերով որակվում է որպես պատերազմական հանցագործություն[1]:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերը միտումնավոր թիրախավորում էին ոչ միայն ռազմական միավորները, բնակավայրերն ու դրանց շրջակայքը, այլ նաև մշակութային հուշարձանները, թանգարանները, մշակույթի տները, արվեստի և երաժշտական դպրոցները, հանրակրթական դպրոցները և այլն (օր. Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու, Շուշիի Մշակույթի և երիտասարդության կենտրոնի, Մարտունու մշակույթի տան ռմբակոծումը և այլն) (առավել մանրամասն տես՝ Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկման ահազանգեր):

Հայկական մշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման քաղաքականությունն Ադրբեջանի մշակութային քաղաքականության հիմքում է եղել դեռևս խորհրդային տարիներից: Դրան որպես լծակ նպաստել է խորհրդային քարոզչության աթեիստական գաղափարախոսությունը [Petrosyan, 2020, 85]: Թանգարանային ոլորտի կայացումը Արցախում սկսվել էր դեռևս խորհրդային տարիներին: Առաջին թանգարանները բացվել են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում սովետական քաղաքականության համատեքստում: Այս թանգարանների շարքում առաջինը Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանն էր, որը հիմնադրվեց 1939 թվականին: Հետագայում բացվեցին պատմաերկրագիտական թանգարանի Ասկերանի, Շուշիի, Հադրութի մասնաճյուղերը:

Թանգարանային ոլորտի կայացումը Արցախում առաջին պատերազմից հետո: Արցախի Հանրապետության քաղաքականապես ճանաչված չլինելը, պատերազմական իրավիճակը և դրանից բխող անվտանգության գերակա խնդիրները, միջազգային համագործակցությունից կտրված լինելը, միջազգային կառույցներին անդամակցելու արգելքները և բարդությունները մշտապես լուրջ խնդիրներ են հարուցել Արցախում մշակութային ժառանգության պահպանության և միջազգայնացման համար՝ այդ ոլորտը ստորադասելով անվտանգության և պաշտպանական խնդիրներին: Այդուհանդերձ, Արցախի Հանրապետությունը, 1994 թվականի մայիսյան հրադադարից ի վեր՝ ձեռնամուխ էր եղել հարաբերական խաղաղ պայմաններում կազմակերպել մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանությունը: Այս սկզբունքն ամրագրվել էր Արցախի Հանրապետության օրենսդրական համակարգում՝ համապատասխան օրենքների տեսքով: Ի մասնավորի նշենք՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքը հունիսի 18-ի ՀՕ-59, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ԼՂՀ 2011 թվականի հոկտեմբերի 26-ի ՀՕ-59 օրենքը, «Գեղարվեստական կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 748-Ն որոշումը, «Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 12-ի ՀՕ-50 օրենքը, «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի հունիսի

[1] Մշակութային ժառանգության ոչնչացումը կանխելու իրավական առաջին նորմերը թեև սկսեցին ձևակերպվել 19-րդ դարի կեսերից, սակայն գործուն քայլեր, իրավական կարգը որպես մշակութային ժառանգության պաշտպանական միջազգային գործիք սկսեց կազմավորվել 20-րդ դարի երկրորդ կեսին և հիմնականում կապվում է միջազգային կազմակերպությունների և կոնգլոմերատների գործունեության հետ: Միջազգային մի շարք փաստաթղթերի և կարգավորումների համաձայն մշակութային ժառանգության կանխամտածված ոչնչացումը, բռնագրավումը և ապօրինի յուրացումը համարվում են պատերազմական հանցագործություններ և Միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումներ:

27-ի ՀՕ-36-Ն օրենքը, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 890-Ն որոշումը, «ԼՂՀ շրջաններում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 2013 թվականի հունիսի 18-ի 380-Ա որոշումը [Պետրոսյան, Մուրադյան, 2022, 18-20]: Կարևոր է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում թանգարանների մասին օրենք չի ընդունվել, թեև այդ օրենքի նախագիծը քննարկվում և փոփոխությունների է ենթարկվում սկսած 2015 թվականից (Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին նախագիծ): Մինչդեռ Արցախի Հանրապետությունում 1999 թվականի փետրվարի 12-ին ընդունվեց օրենք «Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին», որը սահմանում էր թանգարանային ոլորտի գործունեությունը՝ պետական և ոչ պետական թանգարանների հիմնադրման կարգը, ֆինանսավորման խնդիրները, թանգարանային հավաքածուի ձևավորման, մշակութային արժեքների ձեռքբերման կարգը [Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին օրենք, Հոդված 6, 7]:

Թանգարանային ու գրադարանային գործի զարգացման ոլորտում քայլեր են ձեռնարկվել նոր ցուցանմուշների ձեռքբերման, թանգարանային ու գրադարանային հավաքածուների համալրման, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, շենքային, գույքային, նյութատեխնիկական պայմանների բարելավման ուղղությամբ [Պետրոսյան, Մուրադյան, 2022, 35]:

Հատկապես նշելի է պետական և մասնավոր նոր թանգարանների բացումը: 2010 թվականին հիմնադրվել է «Տիգրանակերտ» պատմահնագիտական պետական արգելոց ՊՈԱԿ-ը: Թանգարանում ցուցադրվում էին Տիգրանակերտի հնավայրից գտնված շուրջ 300 ցուցանմուշներ: Թանգարանը տարեկան ունենում էր մոտ երեսուն հազար այցելու [Պետրոսյան, 2022, 186]:

2016 թվականին հիմնվում է Տումու Թևան Ստեփանյանի անվան թանգարանը, որը Հադրութի «Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի մասնաճյուղն էր: Բոլոր ցուցանմուշները ներկայացնում էին Տումի գյուղի բնակիչ, պետական և ռազմական գործիչ Թևան Ստեփանյանի կյանքն ու գործունեությունը:

2014 թվականին հիմնադրվել է «Պրոֆ. Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարանը: Թանգարանը հիմնադրվել է հայտնի երկրաբան, երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի նախաձեռնությամբ, ով այդ նպատակով Արցախին է նվիրել հանքաքարերի, լեռնային ապարների և օրգանական բրածո մնացորդների իր անձնական հավաքածուն: Այն կազմում է 403 նմուշ՝ աշխարհի 40 երկրներից և Ռուսաստանի Դաշնության 20 շրջաններից: Ցուցադրության մեջ ներառված են եղել նաև Արցախի տարբեր շրջաններից հավաքագրված հանքաքարեր և օգտակար հանածոներ:

2013 թ. Հիմնվում է «Կերպարվեստի պետական թանգարան»-ը, որը կրկին պրոֆեսոր Գրիգորի Արկադիի Գաբրիելյանցի նախաձեռնությունն էր: Թանգարանի հավաքածուն՝ թվով 673 ցուցանմուշ, կազմված էր բացառապես նվիրատվություններից: Թանգարանի առանձնահատկություններից են նվիրատուների հարուստ ցուցակը և ներկայացվող աշխատանքների լայն աշխարհագրությունը. Արցախ, Հայաստան, Վրաստան, ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Եթովպիա, Ինդոնեզիա, Մադագասկար և այլն: Մեծ արժեք են ներկայացնում հատկապես թանգարանին նվիրաբերված նշանավոր արվեստագետների աշխատանքները (Մ.

Սարյան, Գառզու, Է. Շահին, Ժանսեմ, Հ. Հակոբյան, Դ. Բուռլյուկ, Ա. Շևչենկո, Ա. Սաֆոխին, Դ. Պլավինսկի և այլք):

2011 թվականին հիմնադրվել է Շուշիի գորգերի մասնավոր թանգարանը: Թանգարանում պահպանվում էր 860 ցուցանմուշ, որից 278-ը՝ Արցախյան զարդանախշերով հին գորգեր և կարպետներ: Թանգարանում ցուցադրված էին նաև կենցաղային իրեր (16-20-րդ դար), խեցեգործության նմուշներ (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ - մ. թ. 1-ին հազարամյակ) և գեղանկարներ [Դանիելյան, Գասպարյան, 2022, 189-190]:

2013 թվականին հիմնադրվել է «Տողի Մելիքական ապարանք», հավաքածուն՝ թվով 82 ցուցանմուշ, ամբողջությամբ Տողի Մելիքական ապարանքից հայտնաբերված հնագիտական իրերն էին:

«Շուշիի հայկական դրամի մասնավոր թանգարանը» հիմնադրվել է 2018 թվականին: Այստեղ ներկայացված էր 700 մետաղադրամ և թղթադրամ: Ամենահինը Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե մետաղադրամն էր (մ.թ.ա. 4-րդ դարի վերջ), ներկայացված էին նաև Ծոփքի հայոց թագավորության, Տիգրան Մեծի, Արտավազդ 2-րդի, Կիլիկյան Հայաստանի մետաղադրամներ և թղթադրամներ:

Համեմատաբար խաղաղ պայմաններում թանգարանային ոլորտի զարգացումը նպաստել է համայնքային մշակութային կյանքի ակտիվացմանը, կազմակերպվել են թանգարանների միջազգային օրվան, «Թանգարանների գիշերվան», «Եվրոպական ժառանգության օրերին» և գրադարանավարի օրվան նվիրված ամենամյա միջոցառումներ:

Թանգարանները նաև կրթական և հետազոտական կարևոր կենտրոններ էին: Թանգարանների գործունեության հանդեպ հետաքրքրասիրությունը մեծ էր նաև Արցախի դպրոցականների շրջանում: Թանգարաններում կազմակերպվում էին տարբեր կրթական ծրագրեր՝ թեմատիկ դասախոսություններ և ուսուցողական ֆիլմերի դիտում:

Մինչև 2020 թ. աշուն իրականացվել են բազմաթիվ պետական ծրագրեր՝ Արցախի մշակութային կյանքը զարգացնելու համար: Օրինակ՝ թանգարանների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ-ում թանգարանների անձնակազմի համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և սեմինարներին ապահովվում էր նախարարության ենթակայության թանգարանի անձնակազմի մասնակցությունը: Թանգարանների և գրադարանների զարգացման ոլորտում քայլեր են ձեռնարկվել նոր ցուցանմուշներ ձեռք բերելու, թանգարանների և գրադարանների հավաքածուները համալրելու, մատուցվող ծառայությունների որակը բարելավելու և շենքի, գույքի և նյութատեխնիկական պայմանները բարելավելու ուղղությամբ: Հատկապես ուշագրավ է նոր թանգարանների բացումը. Տիգրանակերտ, Քաշաթաղ, Շուշի և այլն: Արցախի Հանրապետության պատմական շրջակա միջավայրի պահպանության ծառայությունը եղել է ICOM- ի ինստիտուցիոնալ անդամ, և որոշ ICOM մասնագետներ երբեմն պատրաստել են թանգարանային անձնակազմեր Արցախում:

Վերոնշյալը փաստում է, որ 1994-2020 թվականների համեմատաբար խաղաղ տարիները (չհաշված 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմը և հրադադարի ռեժիմի կանոնավոր խախտումները) որոշակի կայունության և զարգացման հնարավորություններ ստեղծեցին արցախահայության համար նաև մշակութային ժառանգության կառավարման ոլորտում:

Թանգարանը պատերազմի ընթացքում և հետո: Պատերազմի ողջ ընթացքում ադրբեջանական բանակի կողմից հուշարձանները թիրախավորելու դեպքերը եզակի չեն: Ակնահայտ իրողություն է, որ նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրից հետո ադրբեջանական վերահսկողության տակ անցած

տարածքներում հուշարձանների և մշակութային-կրթական հաստատությունների հանդեպ վանդալային գործողությունները դարձան ավելի ինտենսիվ: Դրա վկայություններն են սոցիալական կայքերում նաև ադրբեջանցի օգտատերերի կողմից պարբերաբար տեղադրվող տեսանյութերը, որտեղ ադրբեջանական կողմը ոչնչացնում, աղավաղում և անարգում է հայկական մշակութային արժեքները: Ամենավառ օրինակներից է դեռ նոյեմբերի 15-ին ադրբեջանցի օգտատերերից մեկի կողմից հրապարակված մի տեսանյութ, որտեղ երևում է Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին՝ մասամբ ավերված վիճակում: Հստակ է, որ գրեթե ամբողջությամբ ավերվել են եկեղեցու գմբեթն ու զանգակատունը (տես՝ Ադրբեջանցիները ավերել են Շուշիի Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթն ու զանգակատունը): Համացանցում տեղադրված մեկ այլ տեսանյութում հստակ երևում է, որ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու պատերին ադրբեջանցիները ներկով գրառումներ են կատարել (հղում): Միջազգային հանրության քննադատության և ճնշման շնորհիվ այն մաքրվեց: Վերոնշյալ դեպքերը խոսում են այն մասին, որ Ադրբեջանական կողմը խախտում է 1993 թվականին իր կողմից վավերացրած **Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիայով** (հոդված 4) ստանձնած պարտականությունները, որտեղ մասնավորապես նշվում է. «**Մշակութային արժեքների հարգումը.** Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց, ինչպես նաև մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից» [Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա 1954, հոդված 4]:

Պատերազմի արդյունքում Արցախի մշակութային կյանքում ամենամեծ վնաս կրած ոլորտներից են թանգարանները, որոնց կեսից ավելին մնացին Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Այս թանգարանները և դրանց հավաքածուները վտանգի տակ են և էապես վնասվել են դեռ պատերազմի օրերին:

Հադրութ քաղաքի բնակիչները, ովքեր ստիպված են եղել լքել իրենց տները և մինչ այժմ չեն կարող վերադառնալ այնտեղ, փաստում են, որ այրվել է Հադրութի պատմա-երկրագիտական թանգարանը [Դաշտային օրագիր]:

Թանգարանի կամ նրա շրջակայքի հատուկ թիրախավորման մեկ այլ դեպք է արձանագրվել Տիգրանակերտի հնագիտական թանգարանի դեպքում: Նոյեմբերի 5-ին Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի ղեկավար պ.գ.դ. Հ. Պետրոսյանն իր ֆեյսբուքյան էջում տեղեկացրեց, որ ռմբակոծվել է Տիգրանակերտի հնագիտական հանգրվանը, որը մի քանի տասնյակ մետր է հեռու թանգարանից (Տիգրանակերտի հնագիտական հանգրվանի ռմբակոծումը): Բարեբախտաբար թանգարանին միայն բեկորներ էին հասել և շենքը լուրջ վնասներ չէր կրել:

Ադրբեջանի վերահսկողության տակ անցած թանգարաններում ընդհանուր առմամբ պահվում էր ավելի քան 20000 ցուցանմուշ [ԱՀ ՄԻՊ զեկույցը հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի վերաբերյալ]: Թանգարանների և ցուցանմուշների վիճակի մասին առայժմ ոչինչ հայտնի չէ:

Այս թանգարանները կարևոր կրթական և մշակութային միջավայր էին ստեղծում համայնքներում և կարևոր դեր էին խաղում բնակիչների կյանքում: Այստեղ պարբերաբար անց էին

կացվում կրթական ծրագրեր, նշվում էին տոներ, իրականացվում էին փառատոներ և միջոցառումներ. թանգարանները դարձել էին համայնքների զարգացման երաշխիքը: Օրինակ՝ 2016 թվականից Տիգրանակերտում նշվում էր Վարդավառը, որին ակտիվ մասնակցում էին ինչպես շրջակա գյուղերի բնակիչները, այնպես և հյուրեր տարբեր տեղերից: Այստեղ պարբերաբար կազմակերպվում էին օպերետաներ և դասական համերգներ: Վերջին տարիներին Տիգրանակերտը տարեկան ընդունում էր միջինը 30,000 այցելու՝ ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Կանադայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Իտալիայից և այլ երկրներից [Petrosyan. 2019, 69-77]: 2016 թվականից Տողի Մելիքական ապարանքի[1] տարածքում էր անց կացվում «Արցախ գինու ամենամյա փառատոնը»: Ինչպես Տիգրանակերտում և Տողում, այնպես և Արցախի բոլոր թանգարաններում միշտ անց են կացվել թանգարանների միջազգային օրվան նվիրված Թանգարանային գիշեր, իսկ Եվրոպական օրերի շարքում կրթական-ճանաչողական բազմաթիվ միջոցառումներ:

Այս թանգարաններից որոշների հավաքածուն մնաց թանգարանի ապաստարաններում, մեծամասնությունը՝ ցուցասրահներում: Արցախի Կրթության, գիտության և մշկույթի (հիմա՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) նախաձեռնությամբ պատերազմի օրերին տարհանվել և ապահով վայր են տեղափոխվել որոշ թանգարանների ցուցանմուշներ: Շուշիի գորգերի թանգարանը կարելի է համարել թանգարանային հավաքածուն փրկելու անհատական նախաձեռնության լավագույն օրինակներից: Շուշիի գորգերի թանգարանի հիմնադիր Վարդան Ասծատրյանը այն հիմնել էր 2011 թ-ին: Հավաքածուն բաղկացած էր երկու մասից. հիմնադիր մասնավոր հավաքածուն ընդգրկում էր հայտնի հայ գորգագործների հին գորգեր՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տարբեր գյուղերից: Երկրորդ մասը բաղկացած է հին հայկական գորգերից, որոնք հիմնադիրը գտել և գնել է աշխարհի տարբեր երկրներից: Այս թանգարանը հատուկ կրթական, մշակութային և հետազոտական կենտրոն էր: Պատերազմական իրավիճակի պատճառով թանգարանի հիմնադիրը Երևան տեղափոխվեց ցուցադրված հարյուրից ավելի ցուցանմուշներ՝ թանգարանի շենքում թողնելով ավելի քան 200 գորգ և այլ ազգագրական իրեր:

Թանգարանի պահպանությունը և միջազգային գործիքները: Տարբեր միջազգային կոնվենցիաներ, հռչակագրեր, օրենքներ և էթիկայի կանոններ կարգավորում և ձևավորում են մշակութային ժառանգության պաշտպանության իրավական համակարգերը: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել հատկապես երեք համաձայնագրերը, որոնք վավերացվել են թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի կողմից: Դրանք են.

• Զինված բախումների արդյունքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիան և դրա երկու արձանագրությունները (1954 և 1999) [տես՝ Հաագայի 1954 թ. համաձայնագիրը և երկու արձանագրությունները],

• Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թ. [տես՝ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թ. Համաձայնագիր] ,

[1] Տողը Հադրութի շրջանի գյուղերից է: Այստեղ էր գտնվում Մելիքական ապարանք արգելոցը, որի կազմում նաև թանգարանը: Գյուղի կենտրոնում գործում էր նաև Տողի արվեստի դպրոց, որտեղ սովորում էին բազմաթիվ աշակերտներ շրջակայքի տասնյակից ավել գյուղերից: Հուշարձանների պահպանության պետական ցուցակում Տող գյուղից հաշվառված է 97 հուշարձան:

• Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. Կոնվենցիան (առավել հայտնի է որպես Համաշխարհային ժառանգության կոնվենցիա) [տես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. Համաձայնագիր]:

Այս կոնվենցիաներում հիմնական գաղափարն այն է, որ մշակութային ժառանգության թիրախավորումը կամ միտումնավոր ոչնչացումը դիտարկվեն որպես գործողություններ ընդդեմ համաշխարհային ժառանգության և քննադատվեն միջազգային հանրույթի կողմից: Վերոնշյալ և նմանատիպ կոնվենցիաների հիմնական թերությունն այն է, որ դրանք նախատեսված են և հասցեագրված են միջազգայնորեն ճանաչված պետություններին: Արցախի պարագայում այդ կոնվենցիաները կարծես թե գործունակ չեն, օգտակար չեն, քանի որ Արցախը միջազգայնորեն չճանաչված պետություն է: Այս դեպքում պետք է առաջնահերթություն տրվի ժողովուրդների մշակութային իրավունքների իրացման խնդրին: Այս իմաստով ավելի նպատակային է ուսումնասիրել Միջազգային քրեական դատարանի հռոմեական օրենքը (ստատուս), որը մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացումը համարում է պատերազմական հանցագործություն [տես՝ Միջազգային քրեական դատարանի հռոմեական օրենք]:

Եզրակացություն: Չնայած կան զինված հակամարտությունների գոտիներում մշակութային արժեքների պաշտպանության միջազգային մի շարք օրենքներ, կոնվենցիաներ և հարուստ պրակտիկա, բայց մշակութային ժառանգությունը մնում է ամենախոցելիներից մեկը: Ժառանգությունը մշակութային ինքնության ձևավորման արդյունքում ստեղծված արժեքների ամբողջությունն է, որը մարմնավորում է համայնքի ինքնությունը և այդ տարածքին պատկանելիությունը: Հետևաբար, հակամարտության ընթացքում, մասնավորապես, մշակութային ժառանգությունը ենթարկվում է հարձակումների, ռմբակոծությունների, քանի որ նրա ոչնչացումը կապված է համայնքի ոչնչացման հետ, այն ուղղված է համայնքը տարածքից կտրելուն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության թիրախավորումը և պատերազմից հետո ոտնձգությունները մշակութային ժառանգության հանդեպ նպատակ ունեն վերացնել բնակչության տարածքային պատկանելիության մշակութային ապացույցները: Մշակութային ժառանգությունը համայնքի պատմությունն է, հիշողությունները, որոնք ամրապնդում են համայնքի կապը իր հողի հետ: Սա է պատճառներից մեկը, որ մշակութային ժառանգությունը դառնում է ռազմավարական թիրախ:

Մշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման ադրբեջանական մեխանիզմները գործում են մի քանի ուղղություններով: Հիմնականում կարող ենք փաստել հայկական մշակութային ժառանգության հանդեպ ոտնձգությունների երեք ուղղությունների մասին՝ յուրացում, հայկականության ժխտում և ոչնչացում: Անմիջապես համաձայնագրի ստորագրումից հետո սոցիալական ցանցերում հայտնվեցին գրառումներ, որի համաձայն մի շարք հայկական մշակութային հուշարձաններ, եկեղեցիներ ներկայացվում են որպես աղվանական (Causcasian Albanian): Ադրբեջանական քարոզչական մեքենան նպատակ է հետապնդում այս ճանապարհով յուրացնել հայկական մշակութային արժեքները: Նշվածի ամենավառ օրինակը Դադիվանքն է [տես՝ Now comes a Karabakh war over cultural heritage]: Պատահական չէ, որ Ադրեջանը Դադիվանքի քարոզիչ է նշանակել ազգությամբ ուդի Ռաֆիկ Դանաքարիին: Ադրբեջանական իշխանությունների նախաձեռնությամբ ադրբեջանցիներ և ուդիներ են այցելել և աղոթել Դադիվանքում (տես՝ Ադրբեջանը Դադիվանքը հռչակում է ուդիական), ինչը մեր կարծիքով քաղաքական նպատակ էր հետապնդում՝ հայկական հուշարձանները «աղվանացնելու» և «հայկականությունից» զրկելու:

Այսպիսով, ադրբեջանական գրավյալ տարածքներում մնացած հայկական նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը, մշակութային և կրթական արժեքները ոչնչացման

վտանգի առջև են կանգնած: Եթե միջազգային համապատասխան կառույցները քայլեր չձեռնարկեն հայկական մշակույթը փրկելու ուղղությամբ, համաշխարհային ժառանգությունից կարող են անհետ վերանալ Արցախի (ադրբեջանական կողմում մնացած) հոյակերտ եկեղեցիները, հուշարձանները, մելիքական տները, թանգարանները և թանգարանային հավաքածուները, ազգագրական իրերը, մշակույթի տները և այլն:

Գրականության ցանկ

Ադրբեջանը Դադիվանքը հռչակում է ուդիական - https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%a4%d5%a1%d5%a4%d5%ab%d5%be%d5%a1%d5%b6%d6%84%d5%a8-%d5%b0%d5%bc%d5%b9%d5%a1%d5%af%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a7-%d5%b8%d6%82%d5%a4%d5%ab%d5%a1/

Ադրբեջանցիները ավերել են Շուշիի Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթն ու զանգակատունը - https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d6%81%d5%ab%d5%b6%d5%a5%d6%80%d5%a8-%d5%a1%d5%be%d5%a5%d6%80%d5%a5%d5%ac-%d5%a5%d5%b6-%d5%b7%d5%b8%d6%82%d5%b7%d5%ab%d5%ab-%d5%af%d5%a1%d5%b6%d5%a1/

ԱՀ ՄԻՊ զեկույցը հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի վերաբերյալ - https://artsakhombuds.am/hy/news/494

Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկման ահազանգեր - https://monumentwatch.org/hy/%d5%a1%d5%b0%d5%a1%d5%a6%d5%a1%d5%b6%d5%a3%d5%a5%d6%80/

Դանիելյան Ե., Գասպարյան Լ. 2022, Շուշի քաղաքի թանգարանները, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, 2022, 2, Երևան, 189-190:

Դաշտային օրագիր - Հարցազրույց Հադրութի նախկին բնակիչ, ժամանակավորապես Երևան տեղափոխված Գ.. Ա. հետ, 20.02.2021:

Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա, 1954 - https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75856

Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին օրենք - http://www.nankr.am/hy/627):

Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին նախագիծ- http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7558&Reading=0

Հաագայի 1954 թ. համաձայնագիրը և երկու արձանագրությունները - http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/first-protocol/

Միջազգային քրեական դատարանի հռոմեական օրենք- https://legal.un.org/icc/statute/romefra.htm

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թ. համաձայնագիր - http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13039&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. համաձայնագիր https://whc.unesco.org/en/conventiontext/):

Պետրոսյան Հ. 2022, Արցախի Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ողիսականը, Աշխատություններ Հայաստա,նի պատմության թանգարանի, թիվ 2 (10), էջ 183-189:

Պետրոսյան Հ., Մուրադյան Հ. 2022, Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան:

Տիգրանակերտի հնագիտական հանգրվանի ռմբակոծումը - https://www.facebook.com/photo.php?fbid=4628472710557833&set=pb.100001854498958.-2207520000..&type=3

Monument watch // www.monumnetwatch.org

Now comes a Karabakh war over cultural heritage - https://eurasianet.org/perspectives-now-comes-a-karabakh-war-over-cultural-heritage

Petrosyan H. 2019, The Monument and the Society. Tigranakert in Artsakh, Archeologia Pubblica in Italia, Firenze, 2019, p.69-77

Petrosyan H. 2020, Ethnocide in Artsakh: The Mechanisms Of Azerbaijan's Usurpation Of Indigenous Armenian Cultural Heritage, CULTURAL HERITAGE Experiences & Perspectives In International Context, PROCEEDINGS OF THE ROCHEMP CENTER INTERNATIONAL CONFERENCE 23rd-24th Of January, 79-90